Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Քեթիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Կենսաբանություն

Թեմա՝ Օժտված երեխաների հետ տարվող հոգեբանական աշխատանքների բնույթն ու բովանդակությունը

Վերապատրաստող, մենթոր՝ Լաուրա Գրքիկյան

Ուսուցիչ՝ Թագուհի Մնոյան

Գյումրի 2022

Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 Ներածություն----------3

2 Նպատակ---------- 3-4

3 Հետազոտման մեթոդները----------4

Գլուխ 1

4 Տաղանդավոր երեխաների հիմնախնդրի տեսական

հիմունքները—------ ----- 5-7

Գլուխ 2

5 Դպրոցականների շնորհալիության գործնական ուսումնասիրություն-----8-13

6 ՈՒսումնասիրության արդյունքները---------- 14-15

7 Եզրակացություններ---------- 16-20

8 Օգտագործված գրականություն---------- 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր տեղեկատվական այս դարաշրջանում կարևոր ու արդիական է օժտված երեխաների մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտումն ու ճիշտ զարգացումը, քանի որ այդպիսի երեխաներն են մշակույթի , տնտեսության, քաղաքակրթության շարժիչ ուժը: Այս տեսանկյունով՝ մանկավարժների, սոցիոլոգների, հոգեբանների ուշադրության կենտրոնում պետք է լինեն շնորհալի երեխաները: Մերօրյա իրականությունը էապես զգում է խելացի, տաղանդավոր,ինտելեկտուալ երեխաների կարիքը:Սոցիալ հոգեբանական մի շարք խնդիրների լուծումը այդ բնագավառում այժմեական է ու հրատապ: Ամենից առաջ պետք է չկորցնել պոտենցիալ օժտված երեխաներին , հնարավորություն տալ ոչ միայն նրանց, ովքեր տվյալ կարողություններն ի հայտ են բերել ավելի վաղ տարիքում, այլև նրանց, ում մոտ դրանք արտահայտվում են ավելի ուշ:

Քաղաքակիրթ միտքն ուղղորդում են հենց տաղանդավոր մարդիկ,և առանցքային է մտավոր ներուժի նկատմամբ ուշադրությունը:Առանցքային ու արդիական է նաև օժտված երեխաների կրթական կարիքների ու տարբեր պահանջների վերանայման հարցը, մյուս երեխաների հետ կրթական հավասարության , հասակակիցներից չօտարվելու ապահովումը:

Նպատակ

Ուսումնասիրել շնորհալի երեխաների հոգեբանական և մանկավարժական բնույթն ու բովանդակությունը: Ներկայումս այս ուղղությունը գնալով ավելի առաջնային է դառնում: Դա պայմանավորված է երկրի ինտելեկտուալ ներուժի պահպանման ու զարգացման խնդիրներով, նրա հոգևոր և մշակութային վերածնունդով: Սա նշանակում է, որ հասարակությունը, իսկ դրանից հետո՝ դպրոցը, առանձնահատուկ պատասխանատվություն է կրում շնորհալի երեխաների նկատմամբ և նրանք պարտավոր են անել հնարավորը, որպեսզի այդպիսի երեխաները կարողանան լիարժեք իրացնել իրենց ներուժը՝ի շահ իրենց և ողջ հասարակության բարօրության: Օժտված երեխաների հոգեբանա-սոցիալական ոլորտի զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծումը և օժտված երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ կազմակերպումը հասարակության կարևոր խնդիրներից է:

1. բացահայտել արտակարգ ընդունակություններով օժտված երեխաների
2. նպաստել երեխաների ընդունակությունների պահպանմանն ու զարգացմանը
3. ստեղծել նպաստավոր պայմաններ տարիքային տարբեր խմբերի ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար
4. նպաստել երեխաների սոցիալ-հոգեբանական հարմարմանը:

Հետազոտման մեթոդները: Առաջադրված խնդիրները լուծելու և դրված նպատակին հասնելու համար կիրառվել են համապատասխան գիտական գրականության ուսումնասիրման, գործունեության արդյունքների ընդհանրացման, վերլուծման մեթոդները:

ԳԼՈՒԽ 1:ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Օժտվածության հիմնախնդիրը առնչվում է կրթության, բժշկության, մանկավարժության, սոցիոլոգիայի , ինչպես նաև հոգեբանության հետ:

Մարդու տաղանդի, օժտվածության ուսումնասիրման հիմքը դրել է անգլիացի հայտնի գիտնական Ֆրենսիս Գալտոնը, ով հիմնավորում էր այն միտքը, որ տաղանդը ժառանգաբար է անցնում՝ սերնդե- սերունդ:

Քսաներորդ դարի սկզբին ռուսական մանկավարժության մեջ ծավալվեցին բուռն քննարկումներ օժտված երեխաների բացահայտման և զարգացման սոցիալական անհրաժեշտության , օժտվածության հասկացության սահմանման, ծագման և կառուցվածքի շուրջ:Այդ շրջանում դիագնոստիկ մեթոդներով հետաքրքրված էր Գ. Ի.Ռոսսոլիմոն և նրա առաջարկած համակարգը ներառում էր շնորհալիության ուսումնասիրման հինգ հիմնական ֆունկցիաներ՝ուշադրություն, կամք, ընկալունակություն, մտապահում ասոցիատիվ գործընթացներ՝ իմաստավորում, համակցված կարողություններ, երևակայություն, դիտողականություն, հնարամտություն:

Օժտվածության սահմանումը տարբեր կերպ է ձևակերպվել տարբեր փորձարարական դպրոցների կողմից:

Օժտվածության վերաբերյալ առավել հիմնարար ուսումնասիրություններ իրականացվել են դիֆերենցիալ հոգեբանության մեջ՝ օժտվածությունը սահմանելով առավելապես ինտելեկտուալ ոլորտի դրսևորում։

Չ. Սպիրմենը օժտվածության հիմնական նշան էր համարում մտավոր էներգիայի բարձր գործոնը։ Նրա աշխատանքների արդյունքում սկիզբ դրվեց «ընդհանուր ինտելեկտի գործոն» (C-factor) հասկացության զարգացմանը, որը պայմանավորված էր ժառանգական գործոններով, գնահատվում էր թեստերով և կանխատեսում աշակերտների բարեհաջող զարգացումը , հետագայում նաև մասնագիտական արդյունավետությունը։ Սպիրմենի առաջարկած մոդելը ակտուալ է մինչ օրս։

Հետագայում օժտվածություն հասկացությունը հարստանում է նոր իմաստներով։ Ամերիկյան և անգլիական հետազոտողները օժտվածության սահմանման գործընթացը բնութագրող մեծությունները դիտարկում են որպես բարդ ինտեգրալ ամբողջություն։ Օժտվածության բաղադրիչների մեջ ներառվեց նաև կրեատիվությունը։

Քսաներորդ դարի կեսերին մի շարք գիտնականներ նշեցին ինտելեկտի թեստերի սահմանափակումները օժտվածության որոշման հարցում։ Օժտվածությունը սահմանվում էր որպես մարդու ձգտումների դաշտում մեծ ձեռքբերումներ ունենալու ընդունակություն։ Օժտվածության ուսումնասիրման հիմնական ֆունկցիաներն են՝ ուշադրություն, կամք, ընկալունակություն, մտապահում ասոցիատիվ գործընթացներ՝ իմաստավորում, համակցված կարողություններ, երևակայություն, դիտողականություն, հնարամտություն։

Քսաներորդ դարի վերջին օժտվածության հիմնախնդրի ուսումնասիրությունը նոր ընթացք ստացավ։ Գիտնականները համարում էին, որ ճանաչողական պահանջմունքները անպայմանորեն կապվում են դրական հուզական կենտրոնների հետ, որը և նպաստում է տվյալ ընդունակությունների զարգացմանը։

Ռ. Մ. Գրանովսկայան անձի ներուժի առանցքային բնութագրիչ էր համարում ոչ թե ինտելեկտը կամ կրեատիվությունը, այլ մոտիվացիան։

1972 թվականին ԱՄՆ-ի կրթության հանձնաժողովի կողմից ներկայացված շնորհալիության սահմանումը, չնայած քննադատություններին, կիրառվում է մինչ օրս՝«Օժտված և տաղանդավոր համարվում են այն երեխաները, ովքեր դուրս են բերվում

փորձառու մասնագետների կողմից և իդեմս բարձր ընդունակությունների ունեն մեծ ձեռք բերումների հասնելու ներուժ: Այդպիսի երեխաները մասնագիտացված ուսումնական ծրագրերի կարիք ունեն, որպեսզի կարողանան ռեալիզացնել իրենց հնարավորությունները»:[1]

Հոգեբանության մեջ հանդիպում է նաև հետևյալ պայմանական դասակարգումը՝ ընդունակություններ, օժտվածություն, տաղանդ, հանճարեղություն: Ընդունակությունները սերտորեն կապված են օժտվածության հետ և հանդես են գալիս որպես վերջինիս զարգացման հիմք:

Տաղանդը բացառիկ ընդունակություններն են, օժտվածության ամենաբարձր մակարդակը որևէ կոնկրետ գործունեության մեջ:

Հանճարեղությունը տաղանդի զարգացման բարձրագույն մակարդակն է՝ կապված որակապես նորի ստեղծման հետ, որի դեպքում անձի ստեղծագործական արդյունքները բացառիկ նշանակություն են ստանում:

[1]Առաքելյան Մ, Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա, Երևան, 2017, էջ 14:

ԳԼՈՒԽ 2: ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Շնորհալի երեխաների հետ աշխատանքի պետական համակարգը ներառում է մի քանի մակարդակ. Այս համակարգի հիմքը մանկապարտեզն ու դպրոցն են: Մանկապարտեզի մակարդակում անհրաժեշտ է ունենալ իրենց սաների շնորհալիությունը ճանաչելու, նրանց համար օպտիմալ պայմաններ ստեղծելու հմտություններ՝ զարգացման, սովորելու և հասակակիցների հետ հարաբերությունների առումով:

Դպրոցում երեխաների ընդունակությունների, պոտենցիալ հնարավորությունների բացահայտումը, զարգացումը կրթության կարևոր հիմնախնդիրներից է:

Օժտված երեխաների կրթության կազմակերպումը պետք է սկսել հենց բացահայտումից ու զարգացումից, քանի որ դրա շնորհիվ մենք գծագրում ենք այն կրթական ուղին և մոտեցումները, որոնք պետք է կիրառենք:

Օժտվածության մասին պատկերացումները փոփոխվում են հասարակության պահանջներին համապատասխան: Օժտվածության բացահայտման մեթոդները բազմազան են և ինտենսիվորեն լրացվում ու թարմացվում են ժամանակին զուգընթաց:

Դպրոցում ուսումնասիրելով աշակերտների շնորհալիությունը՝ ուսուցիչը, բացահայտում է սովորելու ավելի ընդունակ աշակերտներին: Պատահում է, որ աշակերտի համար ավելի հեշտ է լուծել բարդ օրինակներ և խնդիրներ, քան արտահայտել իր մտքերը տեքստ գրելիս կամ վերապատմելիս: Կարողություններն այնպիսի մտավոր որակներ են, որոնց շնորհիվ մարդը համեմատաբար հեշտությամբ ձեռք է բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ և հաջողությամբ զբաղվում ցանկացած գործունեությամբ: Կարողությունները չեն սահմանափակվում միայն գիտելիքներով, հմտություններով , թեև դրանք դրսևորվում և զարգանում են դրանց հիման վրա: Ուստի աշակերտների կարողությունները որոշելիս պետք է շատ զգույշ և նրբանկատ լինել, որպեսզի երեխայի թույլ գիտելիքները անկարողություն չհամարվեն: Նման սխալներ երբեմն թույլ են տրվել նույնիսկ ապագա ականավոր գիտնականների նկատմամբ, որոնք, պատահել է, որ լավ չեն սովորել դպրոցում: Նույն պատճառով, կարողությունների մասին եզրակացությունները միայն որոշ հատկությունների հիման վրա, որոնք ապացուցում են ոչ թե ցածր

ունակությունները, այլ գիտելիքների պակասը, տեղին չեն: Օժտվածության ախտորոշման արդյունավետությունը պայմանավորվում է հոգեբանական գրականության մեջ հայտնի մոտեցումների ընտրությամբ: Այսպես, կողմնորոշիչ կարող է լինել «օժտվածության » ֆենոմենի սահմանման ընտրությունը, տարբեր տարիքներում օժտվածության քանակական և որակական բնութագրականների տեսակը, զարգացման մակարդակը, որոշման հնարավորությունը, հասարակության տարբեր խավերի և ազգային փոքրամասնությունների մոտ օժտվածության առանձնահատկությունների բացահայտումը, սոցիալական պայմանների դիտարկումը և այլն:

Ծնողներից տեղեկատվություն ստանալու համար հաճախ օգտագործում են անկետավորումը, որը կարող է ներառել երեխայի հետաքրքրությունների ոլորտը, ֆիզիկական զարգացումը, ճանաչողական ակտիվությունը, ընդունակությունները, անձնային առանձնահատկությունները :

Գիտնականներ Ռոբերտ Ստերնբերգը և Լ. Ֆ.Ժանգը առաջադրել են օժտված երեխաների դուրսբերման հնգանկյուն մոդելը, որը կազմված է հետևյալ չափանիշներից՝ գերազանցություն, բացառիկություն, արդյունավետություն, ապացուցելիություն, սոցիալական արժեք:

Գերազանցության չափանիշի համաձայն՝անձը պետք է լինի լավագույնը որևէ ոլորտում, կամ մի շարք ոլորտներում՝ համեմատած իր հասակակիցների: Վերջին հստակեցումը կարևոր է, քանի որ գերազանցությունը կախված է համեմատության մեջ գտնվողների հմտություններից :

Բացառիկության չափանիշի համաձայն՝ օժտված համարվելու համար անձը պետքէ համապատասխանի բացառիկության չափանիշին, այսինքն պիտի ունենա բարձր մակարդակի որևէ բնութագրիչ, որը հազվադեպ է հանդիպում հասակակիցների շրջանում: Այս չափանիշը լրացնում է գերազանցության չափանիշին:

Արդյունավետության չափանիշը ենթադրում է, որ այն ոլորտում կամ ոլորտներում որոնցում անհատը գնահատվել է որպես լավագույնը , պետքէ հանգեցնի կամ դրդի արդյունավետության: Արդյունավետության չափանիշը առաջացնում է տարակարծություն այն հարցում , թե ում պետք է գնահատել որպես օժտված:

Որոշ մասնագետների կարծիքով ինտելեկտի թեստի բարձր արդյունքները բավարար չեն անձին օժտված ճանաչելու համար, քանի որ դա դեռ չի նշանակում, որ տվյալ անձը կարող է արդյունք ցույց տալ: Մանկության տարիքում կարելի է երեխային գնահատել որպես օժտված՝ առանց արդյունավետության: Սակայն տարիքին զուգընթաց շեշտը պետք է դնել փաստացի արդյունավետության վրա: Իսկապես օժտված լինելու համար անձը պետք է լինի արդյունավետ ինտելեկտուալ, ոչ թե ունենա թեստային բարձր IQ:

Ապացուցելիության չափանիշի համաձայն՝ օժտված անձի որևէ ոլորտում կամ ոլորտներում գերազանցությունը պետք է ապացուցելի լինի մեկ կամ մի քանի թեստերի միջոցով:

Արժեքի չափանիշի համաձայն անձը պետք է ցույց տա առավելագույն արդյունք մեկ կամ մի քանի ոլորտներում, որն արժևորվում է այդ մարդու և այն հասարակության կողմից, որում նա ապրում է : Հնգանկյուն տեսությունը ընդունում է, որ այն ինչ արժևորվում է մի հասարակության մեջ կարող է տարբեր լինել մեկ այլ հասարակության համար:

Օժտված երեխաների հետ աշխատելիս անհրաժեշտ է իրականացնել տարբեր գործառույթներ՝ հետազոտող, ախտորոշող, կանխատեսող, խորհրդատվական և այլն՝ նպատակ ունենալով նրանց ուղեկցել կյանքի դժվարին ու բարդ իրավիճակներում: Այսպես օրինակ՝ ախտորոշող գործառույթի իրականացումը սկսվում է սոցիալ-հոգեբանամանկավարժական ամբողջական հետազոտությունից. ախտորոշվում են տվյալ երեխայի անհատական առանձնահատկությունները, նրա զարգացման յուրահատկությունները, օժտվածության տեսակը, աստիճանը, արվում են համեմատությունները, ընդգծվում են նրա տարբերակվածության դրսևորումները, հաջողությունները, ձեռքբերումները, սոցիալական միջավայրում նրա կողմից իրականացվող սոցիալական դերերը, բացահայտվում են միջավայրի և օժտված երեխայի փոխազդեցությունները, նրա սոցիալականացման վրա դրական և բացասական տարբեր գործոնների ազդեցությունները: Օգտագործվում են դիտման, հարցման տարբեր մեթոդներ (հարցազրույց, անկետաներ) և մեթոդիկաներ, օրինակ՝ հետազոտության սոցիոմետրիկ մեթոդիկայի միջոցով հնարավոր է պարզաբանել դասարանում միջանձնային հարաբերությունների բնույթը (համակրանքներն ու հակակրանքները):

Օժտված երեխաների հետ աշխատանքում կիրառվում են հաղորդակցական-տեղեկատվական տեխնոլոգիաներ, որոնց միջոցով կարելի է ստեղծել փոխազդեցություններ և փոխներգործություններ, նոր վարքագծեր, ընկալել, գնահատել և մեկնաբանել մեկը մյուսի վարքագիծը, լուծել հուզող խնդիրները, բավարարել հոգևոր ու նյութական պահանջմունքները, զարգացնել ինքնաճանաչողությունը: Կիրառվում են նաև կազմակերպչական տեխնոլոգիաներ, իրականացվում է դաստիարակչական խորհրդատվություն (երկարաժամկետ, կարճաժամկետ, պարբերական, հրատապ-իրավիճակային) սոցիալ-մանկավարժական բոլոր ոլորտներում:

Դաստիարակչական խորհրդատվական աշխատանքն օժանդակ օգնություն է բուն դաստիարակության գործընթացի իրականացման հարցում ոչ միայն կրթական հաստատությունում, այլև դրա շրջանակներից դուրս՝ ընտանիքում, հասակակիցների, ընկերական միջավայրում և այլն:

Երեխաների շնորհալիության ուսումնասիրման աշխատանքները նպատակաուղղված են օժտված երեխայի ունակությունների բացահայտմանը և այնուհետ նրանց ունեցած հսկայական ներուժը ստեղծագործական աշխատանքի փոխակերպմանը, ստեղծագործական միջավայրի, երեխայի անձի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, նրանց անհրաժեշտ տարբեր տեսակի օգնության և աջակցության ցուցաբերմանը:

Երեխան և նրա ծնողները պետք է հասկանան, որ տաղանդավորությունը մեծ աշխատանք է: Հնարավոր անհաջողությունները կամ թեթև հաջողությունը չի հիասթափեցնելու երեխային, որ հրաժարվի դրված նպատակից: Հասարակությանը, մանկավարժին կարևոր է տաղանդավոր երեխայի հետ հաստատել ճիշտ հարաբերություններ և հիշել, որ նրան անհրաժեշտ է կրթել, սովորեցնել նստակեցություն, սեր աշխատանքի նկատմամբ ինքնուրույն որոշում ընդունելու ունակություն:

Անհրաժեշտ է օգնել կազմելու երեխայի տաղանդի զարգացման ծրագիրը, որը նախատեսում է թեմաների բազմազանություն և գործնական ուսուցում: Այն հնարավորություն կտա որոշելու երեխայի ուժեղ և թույլ կողմերը, աջակցելու նրա հետաքրքրություններին: Տաղանդավոր երեխայի հետ աշխատելու ծրագրի նպատակն է

սովորեցնել ապրել հասարակության մեջ, որը միշտ չէ, որ բարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում տարբերվող տաղանդավոր երեխաների նկատմամբ:

Երեխային անհրաժեշտ են սոցիալական հմտություններ: Այստեղ կարող են օգնել բազմապիսի ուսուցողական գրքեր նսկավառակներ, սակայն ավելի լավ է մասնակցել խմբային խաղերում, քանի որ տաղանդավոր երեխային անհրաժեշտ է շփվել ուրիշ երեխաների հետ: Երեխային չպետք է զրկել մանկությունից և ծանրաբեռնել: Միայն ուսումնասիրելով իր վերաբերմունքը այդ երեխայի նկատմամբ՝ մանկավարժները կարող են որոշել իրենց և նրա փոխհարաբերությունը: Պետք է նշել նաև, որ տաղանդավոր երեխան կուրացնում է ծնողներին. նրանք կարող են ճնշել նրան՝ մոռանալով այն մասին, որ երեխան չի սիրում ճնշվածություն: Ընտանիքում այդ պատճառով առաջանում են կոնֆլիկտներ:

Տաղանդավոր երեխաների ոչ միօրինակ վարքը արտահայտվում է տրամադրության հաճախ փոփոխման մեջ, անհամբեր են շփման մեջ, զրուցակցին ընդհատում և ուղղում են, ցուցադրում են սեփական գիտելիքները, միշտ աշխատում են հաստատել իրենց ճշմարտությունը: Բոլոր այս հատկանիշները պահանջում են նախ և առաջ դաստիարակել համբերություն : Տաղանդավոր երեխաները գիտեն՝ ինչ է բարությունը, ճշմարտությունը և գթասրտությունը, սակայն գործնականում այդ հատկանիշները հաճախ չեն կարողանում դրսևորել: Նրանց անհրաժեշտ է մասնագետի՝ սոցիալական մանկավարժի , հոգեբանի օգնությունը: Հարցասիրությունը և ամեն ինչ իմանալու ձգտումը, հզոր ստեղծագործական կարողությունը վեր է ածվում վարքի նորմերի խախտման և լարում հարաբերությունները շրջապատի հետ:

Այսպիսով, ախտորոշիչ աշխատանքները իրականցնելու համար հիմնվում ենք երեք բնութագրիչների՝ ինտելեկտուալ, ստեղծագործական ընդունակությունների և դրդապատճառային համակարգի հետազոտությունների վրա :

Հաճախ կարելի է լսել այն արտահայտությունը, որ տաղանդն իր ճանապարհը կգտնի, սակայն, ինչպես ցույց են տալիս այդ ուղղությամբ իրականացված բազմաթիվ հետազոտական տվյալներ, այդ տեսակետն այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Բացի այդ, կրթական համակարգի գործունեությունը իրականացվում է

որոշ միջինացված ստանդարտների հիման վրա, որը մեխանիկորեն թերի է դառնում առավել բարձր ընդունակություններով երեխաների համար: Այդպիսի երեխաները առավելապես խոցելի խումբ են իրենց անձնային առանձնահատկություններից, ընկալման յուրահատկություններից ելնելով, և չիրականացված, չուղղորդված պոտենցիալը կարող է ուղղվել դեպի ասոցիալ վարքագիծ՝ ի վնաս անձին և շրջապատին:

Օժտված երեխաների շնորհալիության բացահայտման ու զարգացման աշխատանքները կարելի է կազմակերպել գիտափորձի մոդելով՝ առաջ քաշելով հետևյալ նպատակներն ու խնդիրները:

Կրթության պրակտիկան ցույց է տվել, որ ոչ բոլորը, նույնիսկ լավ ուսուցիչը, կարող են սովորեցնել շնորհալի աշակերտներին: Կրթական համակարգում շնորհալի մարդու զարգացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի կարիքներով, ինքնադրսևորման նրա ցանկությամբ, ուսուցման մեջ ստեղծագործական ունակություններով:

Հետևաբար, ուսուցիչ-հոգեբանի աշխատանքը ուղղված է նաև տաղանդավոր մարդու հոգեբանության առանձնահատկությունների վերաբերյալ ուսուցիչներիտեսական գիտելիքների մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական կարևոր որակների ակտիվացմանն ու զարգացմանը, որոնք անհրաժեշտ են արդյունավետությունն ապահովելու համար: ՈՒսումնական գործընթացը մեծապես նպաստում է պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը, ուսուցիչների ընդհանուր և հոգեբանական և մանկավարժական մշակույթի բարելավմանը, մանկավարժական գործունեության մեջ նրանց անհատականության վրա հիմնված դիրքի ամրապնդմանը:

Ներկայումս և՛ ընտանիքում, և՛ ուսումնական հաստատություններում, և՛ առհասարակ անձի զարգացման համար կարևոր սոցիալական ինստիտուտներում կարևոր է շեշտը դնել այն բանի վրա, թե արդյո՞ք ներդաշնակ են զարգանում անձի ընդունակությունները: Եվ իզուր չէ, որ ամբողջ աշխարհի անվանի գիտնականներին մտահոգել է «օժտվածություն» հասկացությունը: Օժտվածությունը ոչ միայն տաղանդի հոմանիշն է, այլ ընդունակության ձև և համամարդկային երևույթ : Դրա մասին շատ հաճախ լռել են կամ խոսել կցկտուր: Ինտելեկտն ու կրեատիվությունը օժտվածության բաղադրիչներն են, որոնք փոխկապակցված են: Կրթական հաստատություններում՝ ուսուցիչների, ընտանիքում

ծնողների անտեղյակությունը կարող է բացասական իմաստով վճռորոշ լինել օժտված երեխայի ապագայի համար: Արտաքին աշխարհի ներգործությունը ևս անխուսափելի է, չնայած և՛ կրեատիվության դրսևորումները, և՛ ինտելեկտուալ կարողությունները ժառանգական հիմք ունեն, սակայն սոցիալական միջավայրի ազդեցությունը բացառել չենք կարող:

Ինտելեկտուալ և կրեատիվ դրսևորումներն անհատի զարգացման ընթացքում ենթարկվում են բազմաթիվ փոփոխությունների: Հատկապես օժտված երեխաների համար բավական խոչընդոտներ են լինում: Այստեղ սոցիալական բոլոր օղակները, որոնք առնչվում են օժտված երեխային, պետք է քննարկվեն մանրամասն, այսինքն և՛ ուսուցիչները, և՛ ծնողները մեծ պատասխանատվություն պետք է կրեն օժտված երեխայի զարգացման համար:

ՈՒսումնասիրության արդյունքները

Օժտված երեխաների շնորհալիության շուրջ ուսումնասիրությունները կատարվել են «Օյունջյան միջնակարգ դպրոց վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, հիմնականում 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտների շրջանում: Հետազոտություններին մասնակցել են թվով 19 անձինք: Աշխատանքն իրականացվել է երկու փուլով.

Ախտորոշիչ փուլ , որն ուղղված էր օժտված երեխաներին բացահայտելուն, դպրոցականների անհատական առանձնահատկությունները ուսումնասիրելուն:

Բուն հետազոտական փուլ - կիրառվել են սոցիալական մանկավարժի՝ օժտված երեխաների հետ աշխատանքի հիմնական մեթոդներ: Հետազոտության ընթացքում օգտագործել ենք տարբեր գործիքներ.

Դիտման մեթոդ – նպատակն էր ուսումնասիրել երեխաների ուսումնական, ստեղծագործական ձեռքբերումները:

Հարցազրույցի մեթոդ – կիրառել ենք դպրոցների, երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոնի սոցիալական մանկավարժների հետ: Նպատակն էր պարզել, թե սոցիալական մանկավարժներն ինչպես են ախտորոշում երեխաների օժտվածությունը, ինչպիսի

խնդիրների հետ են բախվում օժտված երեխաները դպրոցում, և ինչպիսի մեթոդներով են փորձում վերացնել օժտված երեխաների մոտ առաջացող խնդիրները:

Սոցիալական անձնագրերի վերլուծություն - նպատակն էր վերլուծել ուսումնական տարվա ձեռքբերումները, ենթադրյալ օժտվածություն ունեցող երեխաների ընտանեկան բարենպաստությունը:

Թեստավորում - նպատակն էր օժտված երեխաների բացահայտումը, համապատասխանաբար՝ ինտելեկտուալ ընդունակությունների զարգացման, կրեատիվության և մոտիվացիայի մակարդակների ուսումնասիրմամբ: Անկետավորում – սոցիալական մանկավարժի՝ օժտված երեխաների հետ աշխատանքի պատրաստվածության մակարդակի ախտորոշման նպատակով օգտագործել ենք նաև Ա. Ի. Դորովսկայայի «Սոցիալական մանկավարժի պատրաստակմության հետազոտումը:

«ТРИЗ» տեխնոլոգիան – հեղինակը Հենրիխ Ալտշուլյերն է: Նախատեսված է երեխաների ստեղծագործական, վերլուծական մտածողության զարգացման համար: Այն իր մեջ ներառում է մի քանի մեթոդների համակարգ, որոնցից առանձնացված են հետևյալները՝ «Մտագրոհ» և «ԳՈՒՍ»: Սրան զուգընթաց՝ նաև կիրառվել է «ՏՀՏ» տեխնոլոգիան՝ նպատակ ունենալով երեխաներին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ, որն օգնում է նրանց ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, հնարավորություն է տալիս քննարկվող հարցի շուրջ բանավիճել, իսկ բանավեճի արդյունքում ծնվում է ճշմարտությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշվածը թույլ է տալիս ենթադրելու, որ հոգեբանական մեթոդների կիրառումը մտավոր զարգացման բարձր մակարդակ ունեցող երեխաների ընտրության, ինչպես նաև ուսուցման կազմակերպման հարցում կարող է մեծ նշանակություն ունենալ: «Անհրաժեշտ է մշակել, տեղայնացնել հոգեբանական մեթոդիկաների փաթեթ, որը հնրավորություն կտա բացահայտել տարբեր ընդունակությունների զարգացման մակարդակը. դրանց ուղղվածությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել օժտված երեխաների արդեն ձևավորված ընդունակությունները, ընտրել համապատասխան ուսուցման եղանակներ: Առաջին հերթին սրան կարելի է հասնել ուսուցման տարբերակված, առանձին դեպքերում նաև' անհատական ծրագրերի միջոցով»:[2]

«Մտագրոհ»-ը կիրառվում է երեխաների ստեղծագործականվերլուծական մտածողության զարգացման նպատակով: Առաջարկվում է խնդիր, որն ունի բազմաթիվ լուծումներ: Երեխան պետք է արտահայտի իր մտքերն ու գաղափարները խնդրի վերաբերյալ: Այնուհետև քննարկվում են տարբերակները:

«Քեյսի մեթոդ»՝ նպաստում է անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերմանն ու հմտությունների ձևավորմանը: Օժտված երեխաների հետ աշխատելիս սոցիալական մանկավարժը կիրառում է նշված մեթոդը, որի նպատակն է զարգացնել երեխաների ստեղծագործական ընդունակությունները, արագ կողմնորոշվելու ունակությունները, մոտիվացիայի մակարդակը:

Քանի որ օժտված երեխաները ունենում են հասակակիցների հետ շփման դժվարություններ, մտերիմ ընկերներ գտնելու հետ կապված դժվարություններ, Սոցիալական մանկավարժն ու հոգեբանը կիրառում են «Գաղափարների կառուցման մեթոդը»: Այն նպաստում է կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքի արդյունքի ստեղծմանը, միասնական, ընդհանուր գաղափարի սահմանմանը:

Օժտված երեխաների հետ աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նպատակով դպրոցներում ներդրվում է Մեծ Բրիտանիայում ընդունված «Կարգավորում» (Setting)

[2] Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, թիվ 6, Երևան, 2017, էջ 51:

մեթոդը: Այն հնարավորություն է տալիս երեխաներին ընդգրկվել խմբերում՝ ըստ առարկայական ձեռքբերումների մակարդակի: Սոցիալական մանկավարժի կողմից կիրառվում են նաև թրեյնինգներ, խորհրդատվություն, քննարկումներ, սեմինարներ, մոդելավորման, խաղային, քարտային ու տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներ: Սոցիալական մանկավարժն ու հոգեբանը օժտված երեխաների հետ աշխատանքը կառուցում են կույր որոնման մոդելի վրա, որը հիմնված է փորձի և սխալի մեթոդի վրա, լաբիրինթոս մոդելի հիման վրա, որում խնդիրը դիտարկվում է որպես լաբիրինթոս, իսկ լուծում փնտրելու գործընթացը նման է լաբիրինթոսում շրջելուն:

«Տաղանդի զարգացման ծրագիր» մոդելը հնարավորություն է տալիս բարձրացնել օժտված երեխաների ճանաչողական հետաքրքրությունը, զարգացնել ստեղծագործական ընդունակությունները: Հնարավորություն է տալիս որոշել երեխայի ուժեղ և թույլ կողմերը, աջակցել նրա ընդունակությունների զարգացմանը:

Հ այտնի է, որ ժամանակակից կրթությունն ամողջությամբ միտված է անհատական մոտեցման զարգացմանը կրթական հաստատություններում: Սա հատկապես մատնանշվում է, երբ խոսքը գնում է հատուկ կրթական կարիքներով երեխաների մասին: Օժտված երեխաները ևս ներառված են վերջիններիս ցանկում: Կրթությունը միշտ կազմակերպվում է այնպես, որ երեխաների մեծամասնությունը կարողանա դրանից օգուտ ստանալ: Բայց ինչպես ոչ բարձր ընդունակություններով երեխաներին է դժվար հասնել դասարանի ընդհանուր մակարդակին, այնպես էլ բարձր ընդունակություններով երեխաներին դժվար է մնալ դասարանի հետ հավասար մակարդակի վրա, ինչը շատ դեպքերում պարտադրվում է օժտվածներին:

Օժտված երեխաների ուսուցումը պահանջում է դպրոցում մի քանի մասնագետների միասնական աշխատանք և մշտական ներգրավվածություն: Շատ հաճախ օժտված երեխաները չեն ստանում համապատասխան աջակցություն ուսումնառության ընթացքում: Հայտնի է, որ եթե բարձր ընդունակություններով երեխաները չստանան համապատասխան աջակցություն, հատկապես ուսման ընթացքում, նրանց ընդունակությունների դրսևորման հնարավորությունները կտրուկ նվազում են: Օժտված երեխաները հաճախ դպրոցում ուսանելու առաջին իսկ օրերից կարող են ունենալ

դժվարություններ, որոնք կարող են կապված լինել թե՛ կրթական ծրագրերի, թե՛ հոգեբանական հարմարման հետ։

Չնայած նրան, որ օժտված երեխաները ունենում են մի շարք առավելություններ իրենց հասակակիցների հանդեպ ձեռքբերումների տեսակետից, նրանք նաև կարող են ունենալ մեծ քանակով խնդիրներ, որոնք կարիք ունեն մեծ ուշադրության և հետևողականության։ Նման երեխաները հաճախ դասվում են ինչպես արդեն նշել ենք «ռիսկային խմբին»։ Օժտված երեխաների ուսումնական գործընթացի ընթացքում հնարավոր է հանդիպել մի շարք խնդիրների, որոնցից է՝ ուսուցիչների մոտ օժտված երեխաների հետ աշխատելու գիտելիքների և հմտությունների պակասը, դպրոցում անհատական մոտեցման և հատուկ ուղղվածության բացակայությունը։

Ներկայումս կան բազմաթիվ ծրագրեր, որոնք միտված են օժտված երեխաներին հնարավորինս հարմարեցնելու կրթական հաստատության պայմաններին։

Շնորհալի երեխաների հետ աշխատելու պրակտիկան վկայում է անընդհատ առաջացող մանկավարժական և հոգեբանական դժվարությունների մասին, որոնք պայմանավորված են օժտվածության տեսակների բազմազանությամբ, դրա հետազոտության տեսական մոտեցումներով և մեթոդներով, ժամանակակից կրթության փոփոխականությամբ, ինչպես նաև չափազանց փոքրաթիվ մասնագետներով։ Այս առումով կարելիէ նշել մի քանի առաջարկություններ՝ շնորհալի երեխաների օժտվածության պահպանման ու զարգացման համար։

Այսպիսով կարող ենք ասել, որ նախադպոցական և դպրոցական կրթությունը ժամանակակից մարդու ընդհանուր կրթության անբաժանելի մասն է։ Եվ այդ պատճառով մանկապարտեզին ու հատկապես դպրոցին հատուկ առաքելություն է վերապահված. նրանց խնդիրն է բացահայտել երեխայի ծնունդից տրված ներուժը, դաստիարակել աճող մարդու հոգին և բնավորությունը։ Այսօր շատ մանկավարժների և հոգեբանների ուշադրությունը գրավում է շնորհալիության խնդիրը, դրա բնույթը, շնորհալի երեխաների համար հատուկ կրթական ծրագրերի բացահայտման և ստեղծման հնարավորությունները։

Շնորհալի երեխաների հետ աշխատանքի կազմակերպումը բարդ մանկավարժական գործընթաց է։ Առաջին հերթին ուսուցիչը պետք է պատրաստ լինի աշխատելու նման

երեխաների հետ՝ տեղյակ լինելով նրանց առանձնահատկություններին և դժվարություններին, որոնց կարող է հանդիպել:Իսկապես օժտված երեխաներ քիչ կան, բայց նրանք կան, նդաստիարակի ու ուսուցչի համար կարևոր է տեսնել շնորհալիությունը յուրաքանչյուր երեխայի մեջ փորձել բացահայտել և աջակցել:

«Ակնհայտ է, որ մարդկանց մեծամասնությունը վաղ մանկության շրջանում և հատկապես դպրոցում սովորելու ընթացքում սովոր է օգտագործել համարյա միայն հարամետության մտածողությունը: Դպրոցական մանկավարժության այդպիսի թեքումը միշտ էլ եղել է ստեղծագործական մտածողությամբ երեխաների խարազանը:
Ստեղծագործող անհատներին սովորաբար բնորոշ է դիվերգենտ մտածողությունը: Այդպիսի մարդիկ հակում ունեն ձևավորելու նոր համադրություններ այն տարրերից, որոնք մարդկանց մեծամասնությունը գիտեն և օգտագործում են միայն որոշակի ձևով կամ առաջին հայացքից ոչ մի ընդհանուր բան չունեցող երկու տարրերի միջև կապեր ձևավորելու համար»:[3]
Ելնելով դպրոցական հաստատություններում տարվող աշխատանքներից՝ շնորհալի երեխաների հայտնաբերման խնդրի վերաբերյալ՝ այդպիսի երեխաներին բացահայտելու և նրանց ուսուցանելու համար առաջարկում ենք կիրառել նրանց հետագա զարգացման հատուկ ծրագրեր.
1. Նախադպրոցական և դպրոցական հաստատությունների դաստիարակներն ու ուսուցիչները պետք է ունենան մանկավարժական հարուստ գիտելիքներ և փորձ, մանկավարժական ուշադրություն, որպեսզի տեսնեն շնորհալիության հիմքերը երեխաների մեջ:
2.Նման երեխաների դաստիարակության և զարգացման գործում նպատակահարմար է աշխատել նաև մեկ այլ դաստիարակի կամ ուսուցչի հետ:
3. Հետևողական, տքնաջան աշխատանք պետք է կատարել շնորհալի երեխայի ծնողների հետ, քանի որ ընտանիքում երեխաները ստանում են հսկայական աջակցություն, ուշադրություն և մասնակցություն:

[3]Հոգեբանությունը և կյանքը, «Զանգակ» հրատարակչություն, Երևան,2011, էջ 169:

4. Երբեք չպետք է առանձնացնել օժտված երեխաներին այլ երեխաների ներկայությամբ։

5. Յուրաքանչյուր շնորհալի երեխայի համար անհրաժեշտ է մշակել անհատական ծրագիր, այս ծրագրում ընդգրկել դպրոցական հաստատության բոլոր մասնագետներին՝ հոգեբան, բուժքույր, արվեստի ուսուցիչ, ֆիզկուլտուրայի դաստիարակ և այլն։

6.Չպետք է երեխային ծանրաբեռնել անել այն, ինչ նա կարող է անել, քանի որ ուսուցչի նպատակն է նրբորեն և աննկատ զարգացնել նրա տաղանդը։

7. Ամեն կերպ աջակցել և խրախուսել շնորհալի երեխայի նոր գաղափարները, նոր մտքերը և օգնել նրան իրականացնել դրանք։

Այսպիսով, օժտվածության դրսևորման համար անհրաժեշտ է շրջապատող միջավայրի հոգածությունը, ինչը հնարավոր է իրականացնել այն դեպքում, եթե երեխա, ծնող, ուսուցիչ, պետությունն համագործակցությունն ամուր հիմքերի վրա դրված լինի։

ՈՒսումնասիրելով օժտված երեխաների հետ տարվող հոգեբանական աշխատանքների բնույթն ու բովանդակությունը՝ մենք հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1.Տաղանդավոր երեխաների բացահայտման, ուսուցման և զարգացման գործընթացը ժամանակակից ազգային կրթության կարևորագույն խնդիրներից է։

Ներքին կրթական համակարգում վերջին տասնամյակում տեղի ունեցած վերափոխումները, նրա վերակողմնորոշումը դեպի հումանիստական, անհատականության վրա հիմնված և զարգացող կրթական տեխնոլոգիաներ, փոխել են վերաբերմունքը արտասովոր կարողություններ ցուցաբերող երեխաների նկատմամբ։ Հայտնվել են կրթական հաստատություններ և ծրագրեր, որոնց հիմնական նպատակն է բացահայտել, սովորեցնել և զարգացնել շնորհալի երեխաներին։

2.Օժտվածերեխաները համեմատաբար սահմանափակ թիվ են կազմում , ինչն ապացուցում է, որ օժտվածությունը դեռևս մասսայական բնույթ չի կրում, այն հաճախ չի դրսևորվում ուսումնական գործընթացում, քանի որ ենթադրում է ինքնատիպություն, յուրօրինակություն, նորը ասելու համարձակություն։

3.Օժտվածները միշտ չէ, որ նկատվում ու բացահայտվում են ուսուցիչների կողմից՝ պայմանավորված դրա մասին սխալ պատկերացում ունենալու հանգամանքով՝ օժտվածությունը նույնացնում են ուսման առաջադիմության հետ։ Այդ պատճառով

օժտված երեխաները երբեմն մնում են աննկատ և նրանց օժտվածությունը կամ մարում է, կամ ձեռք բերում հակասոցիալական բնույթ։

4. Օժտված երեխաների ուսուցումն արդյունավետ դարձնելու համար ժամանակակից մոտեցումներն են՝

ա. Արագացում: Սա հնարավորություն կտա ուղղորդել զարգացման մեջ առաջ անցնող երեխաների համար անհրաժեշտ պայմանները: Այս մոտեցումը կիրառվում է այն ժամանակ, երբ ուսուցման կազմակերպման այլ մեթոդներ հնարավոր չէ իրականացնել: Դրա պատճառն այն է, որ արագացման համակարգված կիրառումը (շուտ դպրոց ընդունվելը, «թռիչքը» դասարաններով) կարող է լիովին խախտել երեխայի զարգացման նորմալ ընթացքը:

բ. Խորացում: Այս մոտեցումն արդյունավետ է այն դեպքում, երբ երեխան ցուցաբերում է հետաքրքրություն այս կամ այն ոլորտում:

գ. Հարստացում: Այս մոտեցումն ուղղորդված է որակապես նոր ուսուցման մակարդակի, որը չի սահմանափակվում միայն ավանդական ուսումնական ծրագրերով, այլ կապեր է հաստատում տարբեր գիտակարգերի միջև:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Մ. Օժտված երեխաների հոգեբանական դիագնոստիկա,Երևան, 2017, 82 էջ
2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ գնահատում, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, 2003
3. Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ բուհերի համար,Երևան, 1997
4. Պետրովսկու խմբագրությամբ՝ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, «Լույս» հրատարակչություն, Երևան, 1977, 195 էջ
5. «ՀՀ պաշտոնական տեղեկագիր, «Կրթության մասին» ՀՀօրենքը,1999, կետ 18
6. Հոգեբանությունը և կյանքը, «Զանգակ» հրատարակչություն, Երևան,2011,էջ 167-171
7. Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, ԿԱԻ հրատարակչություն, Երևան, 2017
8. Պողոսյան Ս. Օժտվածության երևույթը Յունգի մեկնաբանություններում, Կանթեղ գիտական հոդվ. ժողովածու, Եր., 2008, N 3, 1 (34), էջ 171-176:
9. Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, 689 էջ
10. Бабаева Ю. Д. Динамическая теория одаренности. Москва 1997